

5017
5018
5019
5020

Պրոլետարներ լուրս յերկրներէ — միացե՛ք!

ԲԱԼՅԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ & ԿՆՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԵՐ
2. ՍՈՒԲՆ ՍՊԱՆԳԱՐՅԱՆ
3. ՅԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏ ԳՅՂՈՒԹԱՀԱՅ ԼՆԴԻՐՆԵՐՈՒԹ
4. ԱՐՇԱԿ ԶՈՒՐԱՐՅԱՆ

3KՈԼ9

Ն-84

ԹԻՖԼԻՍ — 1927

84

NOV 2008

420

ԲՍԼՇԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Պրոլետարներ րոտր յերկրների - միացե՛ք!

Հրկնայտ

Ե. ՍՈՒՐԵՆ

**Հ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ա Կ Ա Ն
ԵՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ
Ա Ն Ց Յ Ա Լ Ի Ց**

(Մի էջ Շահումյանի լեզվ Կնուկյանի
գործունեություններից)



ԹԻՎԼԻՍ — 1927

Պրոլետարներ բոլոր յերկրների—միացե՛ք!

Ե. ՍՈՒՐԵՆ

20705

== ՀԵՂԱՓՈՒԱԿԱՆ
ԵՄԻԳՐԱՑԻԱՅԻ / ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ
ԱՆՑՅԱԼԻՑ ==

(Մի էջ Շահումյանի լեզվի Կնուկյանի գործունեյութունից)



APR 2013

Е. Сурен
Из прошлого револю-
цион. эмиграции и сту-
денчества.

(Из деятельности Шау-
мяна и Кнуняна).

Յ Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Մեր կուսակցության Յերկրորդ Համագումարը
վճռական նշանակություն ունեցավ նաև Յեվրո-
պայի հայ ուսանողության կյանքում:

Նա ցնցեց նրա գիտակցությունը. խախտեց դաշ-
նակցական բխցնող մտքի հեգեմոնիան ուսանող
յերիտասարդության վրա:

Արտասահմանի հայ ուսանողության զաղափա-
րական ազատագրումի մեջ աչքի ընկնող դեր ունեն
կատարած Ստեփան Շահումյանը և Բողդան Կնունյանը:

Մենք փորձել ենք վերհիշել այստեղ նրանց
այդ գործը, միաժամանակ ուրվագծելով մի անկյունը
կարմիր հմիզրանտական այն միջավայրի, վորի մեջ
ասլրում եր ուսանող յերիտասարդությունը և վորը
պակաս չեր նպաստում թոթափելու ազգայնական
կույր արբեցումը:

Ե. Ս.

Գլխիկ № 469.

Տիրած 1000.

Պատվեր № 779.

Տպարան «Զարբ» Վաստուրա, Թիֆլիս.



1154-2009

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՑԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՅՅԱԼԻՅ

1.

Մեր կուսակցութեան ուշժի սղըյուրներէց մեկն
ևլ աշն ե, վոր նա տրամադրում ե գիտական սոցիա-
լիզմի պաշարով գինոված ե միջազգային հեղափոխա-
կան շարժման փորձերի մեջ մարզված մի աշնպիսի
հարուստ շտարի, վորպիսին չունի ե վնչ մի սոցիա-
լիստական կուսակցութեան աշխարհիս յերեսին: Շնոր-
հիվ ցարական բռնակալ ռեժիմի, վոր վանում եր
յերկրից դուրս ամեն կարգի բմբոստ տարրեր, տաս-
նյակ տարիների ընթացքում արտասահմանում ամբար-
վեց հեղափոխական եմիգրացիայի մի պատկանելի
ուշժ, վորի արժեքը շատ-շատ անգամ գերազանցում
եր նրա թվական մեծութեանը:

Հեղափոխական եմիգրացիան ստիորարար խմբված
եր յեվրոպական գլխավոր կենտրոններում: Մեծ քա-
ղաքները նրան գրավում եյին վնչ միայն իրենց հետա-
քըքիւր քաղաքական-հասարակական-գիտական կյան-
քով, այլև նրանով, վոր մայրաքաղաքներում ավելի
հեշտ եր լինում գտնել նաև վորեւ աշխատանք,
հայթայթել ապրուստի միջոց: Ռուս եմիգրանտի կա-
րելի յեր հանդիպել գործարաններում՝ վորպես բանվորի,
գրասենյակներում՝ վորպես ստորին ծառայողի, փո-
ղոցներում՝ վորպես բեռնակրի՝ շարեւոր (տաշկան)
քաշիլիս, կարծես գրաստ:

Յեվրոպական խմբերալիստների տիրապետութեան անհյուրընկալ միջավայրում, սոսկալի նյութական պայմաններում, միջազգային վոստիկանութեան շարունակ արթուն հակողութեան ու հալածանքների տակ՝ Ռուսաստանից բռնի վտարված այդ բմբոստ տարրերը ուղղակի և անուղղակի, վորպես ակտիվ մասնակցողներ կամ որչեղտիվ դիտող-ուսումնասիրողներ, — միշտ ուշադիր ու հետաքրքրութեամբ հետևում էյին յեվրոպական և ամերիկյան բանվորական շարժմանը:

Տարիների ու տասնյակ տարիների ընթացքում նրանք յուրացնում էյին սոցիալիստական կուսակցութեանների և պրոֆեսիոնալ միութեանների միջազգային և ազգային կազմակերպութեանների համագումարներից և կոնֆերենցիաներից, զանազան յերկրների մասնակի ու ընդհանուր գործադուլներից, պարլամենտական և համայնական (կոմունալ-մունիցիպալ) ընտրութեաններից, կուսակցութեան միջֆրակցիոն աջ ու ձախ թեքերի, պրոֆմիութեան, կոոպերացիայի և կուսակցութեան բաղխումներից հետևող դասերը: Յուրացնում—ինչպես ընկ. Լենինն և նկատում «Չախութեան յերեսայական հիվանդութեանը կոմունիզմի մեջ» իր սքանչելի աշխատութեան մեջ—գիտական սոցիալիստի թեորիայի և պրակտիկայի «վերջին խոսքը»*):

Բերել-Կուուցկու և Բերնշտեյն-Դավիթի, Գեդ-ժորեսի և Հերվեյի, Ֆերրի-Տուրատիի և «Ավանտիի», մարքսիզմի և բլանքիզմի, սինդիկալիզմի և պարլամենտարիզմի, ռեֆորմիզմի և անարխիզմի մա-

*) Տես Լենին՝ «Չախութեան յերեսայական հիվանդութեանը կոմունիզմի մեջ», թարգմ. Ռուբեն Գաթնյանի և Ս. Յերզնկյանի, Թիֆլիս, — 1921 թ., էջ 10—16:

սին մեր հեղափոխական գաղութները նույնչափ պարզ ու հիմնական գաղափար ունեյին, վորքան այդ յերկրների կուսակցական ամեն մի գիտակից անգամ:

Մեր եմիգրանտը հաճախ ծանոթ էր միջ-ֆրակցիոն վեճերի այնպիսի մանրամասնութեաններին—դետալների, վոր զարմացնում էր նույնիսկ յեվրոպացի սոցիալիստներին: Դրանով պետք է բացատրել մասամբ այն հանգամանքը, վոր Կոմիտեների կոնգրեսներում մեր Խորհրդային Ֆեդերացիայի Կոմունիստական Կուսակցութեան ներկայացուցիչների ճառերը ավելի հարուստ են իրենց բովանդակութեամբ ու լայնութեամբ՝ յերբ անգամ խնդրը վերաբերում է մյուս յերկրների քաղաքական-հասարակական իրերադարձին, քան հաճախ նույն այդ յերկրների պատգամավորներինը:

Ռուսական հեղափոխական եմիգրացիան ամբողջապես ծրծվում էր միջազգային բանվորական շարժմանը հարադատ ապրումներով—ճիշտ այնպես, ինչպես այժմ ռուսական հակա-հեղափոխական եմիգրացիան շնչում է իր սրտին մոտ սալոնական հզիւացած միջնորոտով: Նա ժամանակ էր գտնում հետեւելու մոտից վնչ միայն մեծ պետութեանների ու խոշոր քաղաքների բանվորական կյանքին, այլև ուշադրութեամբ դիտելու համեմատաբար աննշան ու փոքր յերկրներում և յերկրորդական քաղաքներում տեղի ունեցող անցքերը:

Նա գիտեր, որինակ թե ինչո՞ւմ է կայանում Բուլգարիայի «տեսնյակները» և «շիրոկիների» տարածայնութեանների արմատները, թե ինչ տեսիլ է Հունդական սոցիալիստական կուսակցութեան մեջ նրա

մի ժամանակ ահանաւոր անդամ նշուլինհայտի անար-
խաւտական թեքումը և ալլն, և ալլն:

Սոցիալիզմի թերեւտիկները, յեւրոպական բան-
վորական թերթերի և մարքսիստական ամսագրերի
լավագուշն ընթերցողները Ռուսաստանի եմիգրանտ-
ներն ելին: Յեւրոպական ճանաչված սոցիալիստական
լիւերները դասախոսութիւնները և միտինգները ամե-
նից ուշադիր ունկնդիրները և հաւատարիմ հաճախող-
ները - նույնպէս նրանք ելին:

Արտասահմանյան եմիգրանտական կենտրոն-
ներում շատ ուժեղ եր նաև ուստական՝ ալսպէս կոչ-
ված անրարեհույս ուսանողութիւն թիւը, վորի առաջ
ալս կամ ալն պատրվակով փակ ելին ցարական բարձ-
րագուշն դպրոցների դռները: Ռուսաստանից ալամա
չված ալդ ուսանողութիւն խոշորագուշն մասը ալ-
րում եր հեղափոխական եմիգրացիայի կյանքով և իր
վրա յեր առնում վերջինիս գաղափարական ուժեղ ազ-
դեցութիւնը, վորը շատ հաճախ ալիւի ուժեղ եր, քան
հետեւած ֆակուլտետինը: Արտասահման ընկած ուսա-
նողը սովորարար ալիւի բան եր սովորում ալդ հեղա-
փոխական եմիգրացիայի հետ շփելուց, — Պլեխանովի,
Լենինի, Մարտովի, Լուսաշարսկու, Տրոցկու, Զերնովի,
Մինորի, Մեդեմի, Պարվուսի, Սարովեյի և մյուսների
(սոց.-դեմոկրատիայից մինչև «Ամպարաժեհնիյե» խում-
բակի) թեր ու դեմ դիտողութիւններն, քան համալսարա-
նում ալս կամ ալն բուրժուական պրոֆեսորին ունկն-
դրելով:

Մինչև 1905 թվի հեղափոխութիւնը արտասահ-
մանում գոյութիւն ունեյին արդեն ճանաչված եմի-
գրանտական «Կադմակերպ կենտրոններ», ինչպէս, որի-
նակ, ժընեւում, Յիւրիքում, Փարիզում, Բերլինում,

Վիննայում, Մյունխենում, Լոնդոնում և ուրիշ շատ մեծ
ու փոքր քաղաքներում, — վորոշ սովորութիւններով,
հայտնի «ռուս» փողոցներով, հատուկ սրահներով,
տարեկան ու հերթական վեչերինականերով և ալլն:

Ռուսական սոցիալիստական շարժման ալանաւոր-
դիմքերը շարունակ շրջում ելին ալդ քաղաքները և
գուտ կազմակերպչական-կուսակցական գրադմունքների
հետ միաժամանակ բաց ու լալն դասախոսութիւններ
կարդում, գեկուցումներ անում հրատապ հարցերի շուրջը,
ընթացիկ մոմենտի մասին:

Ալդ մինչ-1905 թվի շրջանում եմիգրանտական
գաղութների մեջ առաջին տեղն եր բռնում անշուշտ
ժընեւը, վորտեղ գտնվում ելին Ռուսաստանի հեղափո-
խական կուսակցութիւնների կենտրոնները, ուր հրա-
տարակվում ելին նրանց որդանները — «Искра», «Впе-
ред», «Революция в России» և ալլ թերթեր, ուր ալրում ու
դործում ելին Ռուսաստանի դանազան պապպոնի կազ-
մակերպութիւնների գրեթե բոլոր լիւերները: Յեղափո-
խական մարքսիզմը — Պլեխանովի և Լենինի ղեկավարու-
թյամբ — մինչև մեր կուսակցութիւն Յերկրորդ Համա-
գումարը փառաւոր հաղթանակ եր տարել ու արդեն
իշխում եր մյուս բոլոր հոսանքների վրա: Զինված
մարքսիզմի «վերջին խոսքով», նա վերջնական հար-
վածն եր տվել նարոդնիկութիւն մնացորդներին, եսերա-
կան դիմակի տակ քսաներորդ դարը թեվակոխած
նրա մեռնող տրագիքիաներին: Եմիգրացիայի հրապա-
րակում հեղինակաւոր ու գիտական-հեղափոխական
հմայքով պատած միակ հոսանքը — Ռուսաստանի սո-
ցիալ.-դեմոկրատիան եր:

Մինչև մեր կուսակցութեան Յերկրորդ Համագումարը ժընեռում հայ ուսանողութիւնը—վորպես ամբողջութիւն—գտնվում էր Դաշնակցութեան հպատակութեան տակ: Գուցէ հատ ու կենտ, հայ ուսանողութիւնից կտրված ու նրա կյանքին անմասնակից «ուսացած» հայ ուսանող հարում էր անհատապէս Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցութեանը: Բայց ժընեռի, ինչպէս նաև ամբողջ Յեղիտայի հայ ուսանողութեան «մտքի տիրակալը»—անպայման Դաշնակցութեանն էր: Ժընեռում տարիներ արդեն գոյութիւն ունէր «Դրոշակի» խմբագրութեանը կից «Ջանք» անունով հայ ուսանողական ընկերութիւն, վորի նպատակն էր ժընեռ ընկնող ամեն մի փոքրի շատե հետաքրքրասեր ու հասարակական ջիղ ունեցող յերիտասարդին այնպէս շրջապատել, վոր նա «հայլասերվի» միջազգային սոցիալիզմի թույնով, վորի վարպետ սրբակոյններն էին Ռուսաստանի հեղափոխական եմիգրանտները՝ հատկապէս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան:

«Ջանքիստները» ջանք չէին խնայում կրկնապատկելու մեր ուսանողութեան ազգասիրական զգացմունքները դեպի «հայկական դատը» և Դաշնակցութեանը: «Ջանքը» ստեղծում էր «հարազատ» միջավայր ոտարութեան մեջ, «խնամում և հոգում» էր հայրենի տնից հեռացած յերիտասարդի մտավոր ու հոգեւոր կրիքների ու դաստիարակութեան մասին:

«Ջանքի» հատուկ պարտականութիւնն էր թույլ չտալ հայ ուսանողին «հարաբերութիւն ստեղծելու» մասնավորապէս Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրա-

տական Բանվորական Կուսակցութեան հետ: Սոցիալատ-հեղափոխականների հետ—մանավանդ Լուսկիչ-Արարատակու մոտ գրավումից հետո—ստեղծվել էին բարեկամական կապեր: Մինոր-Չերնովի մեղչանական սոցիալիզմի մրցութիւնը չէր անհանգստացնում Դաշնակցութեան կենտրոնին, թեև վերջինս դեռևս չէր թխել իր «սոցիալիզմի» սուրբոգատը—հայտնի «Կովկասյան նախագիծը»...

«Դրոշակի» խմբագրութեան սենյակներից մեկում—Ռոզըրե փողոցի ստվերաշատ վիլաներից մեկում—շաբաթը մի անգամ ժողովում էին ջանքիստ-յերիտասարդները՝ լսելու Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Խաչատուր Մալումյանի, Յեղիշե Թոփչյանի, Միքայել Վարանդյանի պատգամները: Յեթե առաջին չորս դաշնակցական ավետարանիչները սիրում էին իրենց ունկնդիրների ուղեղները նետել ծակ-ազգասիրական փիլիսոփայութիւնով, և շատ մտահոգված էին, թե ինչպէս անել, վոր անիծյալ Մասիսը իր Նոյի տապանով վերանա միջից (մեծ և միացյալ Հայաստանի ցնդարան իղեղողները դարձնվում էին այդ որերի «Դրոշակ»-«Ջանքի» ծոցում), վերջինս—Դաշնակցութեան միակ «գլխական» թերթերիկ Միքայել Վարանդյանը Զոմբարտը կռան տակին՝ փորձում էր «վարկաբեկ անել» Մարքսին, կասկածի յենթարկել Մարքս-Ենգելսյան ուսմունքի հեղափոխական ու գիտական արժեքը և «ապացուցել», թե—«մարդկային պատմութիւնը դասակարգային կռիւ շարան չէ, այլ ազգային, ուրեմն՝ կորչի մարքսիզմը և կեցցե հայ հեղափոխական Դաշնակցութիւնը:

Մինչև մեր կուսակցութեան Յերկրորդ Համագումարը ժընեռում հայ ուսանողութիւնը—վորպես ամբողջութիւն—գտնւում եր Դաշնակցութեան հպատակութեան տակ: Գուցե հատ ու կենտ, հայ ուսանողութիւնից կտրված ու նրա կյանքին անմասնակից «ուսացած» հայ ուսանող հարում եր անհատապէս Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցութեանը: Բայց ժընեռ, ինչպէս նաև ամբողջ Յեւրոպայի հայ ուսանողութեան «մտքի տիրակալը»—անպայման Դաշնակցութիւնն եր: Ժընեռում տարիներ արդեն գոյութիւն ունեւ «Դրոշակի» խմբագրութեանը կից «Ջանք» անունով հայ ուսանողական ընկերութիւն, վորի նպատակն եր ժընեռ ընկնող ամեն մի փոքրի շատե հետաքրքրասեր ու հասարակական ջիղ ունեցող յերիտասարդին աշնպէս շրջապատել, վոր նա «չայլասերվի» միջազգային սոցիալիզմի թուշնով, վորի վարպետ սրբակողներն եյին Ռուսաստանի հեղափոխական եմիգրանտները՝ հատկապէս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան:

«Ջանքիստները» ջանք չեյին խնայում կրկնապատկելու մեր ուսանողութեան ազգասիրական զգացմունքները դեպի «հայկական դատը» և Դաշնակցութիւնը: «Ջանքը» ստեղծում եր «հարադատ» միջավայր ոտարութեան մեջ, «խնամում և հոգում» եր հայրենի տնից հեռացած յերիտասարդի մտավոր ու հոգեւոր կարիքների ու դաստիարակութեան մասին:

«Ջանքի» հատուկ պարտականութիւնն եր թույլ չտալ հայ ուսանողին «հարաբերութիւն ստեղծելու» մասնավորապէս Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատ-

տական Բանվորական Կուսակցութեան հետ: Սոցիալ-լիստ-հեղափոխականների հետ—մանավանդ Լուսկեիչ-Արարատակու մոտ գրավումից հետո—ստեղծվել եյին բարեկամական կապեր: Մինոր-Չերնովի մեղչանական սոցիալիզմի մրցութիւնը չեր անհանգստացնում Դաշնակցութեան կենտրոնին, թեև վերջինս դեռևս չեր թխել իր «սոցիալիզմի» սուրբոգատը—հայանի «Կովկասյան նախագիծը»...

«Դրոշակի» խմբագրութեան սենյակներից մեկում—Ռոզըրի փողոցի ստվերաշատ վիլաներից մեկում—շարաթը մի անգամ ժողովվում եյին ջանքիստ-յերիտասարդները՝ լսելու Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Խաչատուր Մալումյանի, Յեղիշե Թոփչյանի, Միքայել Վարանդյանի պատգամները: Յեթե առաջին չորս դաշնակցական ավետարանիչները սիրում եյին իրենց ունկնդիրներին ուղեղները նեխել ծակ-ազգասիրական փիլիսոփայութիւնով, և շատ մտահոգված եյին, թե ինչպէս անել, վոր անիծյալ Մասիսը իր Նոյի տապանով վերանա միջից (մեծ և միացյալ Հայաստանի ցնդարան իգեոլոգները դարբնվում եյին այդ որերի «Դրոշակ»-«Ջանքի» ծոցում), վերջինս—Դաշնակցութեան միակ «գիտնական» թեորետիկ Միքայել Վարանդյանը Զոմբարտը կուտ տակին՝ փորձում եր «վարկաբեկ անել» Մարքսին, կասկածի յենթարկել Մարքս-էնգելսյան ուսմունքի հեղափոխական ու գիտական արժեքը և «ապացուցել», թե—«մարդկային պատմութիւնը դասակարգային կովի շարան չե, այլ ազգային, ուրեմն՝ կորչի մարքսիզմը և կեցցե հայ հեղափոխական Դաշնակցութիւնը:

Յերբեմն «Ջանքի» հանդիսավոր նխաերին շուտ-պուժ էյին վազել Լոզանից ժընե «Թարմության» և ողնության այնտեղի «ուսանողները» — Ահարոնյան, Նիկ. Աղբալյան, Արշ. Ղազարյան, Սիմ. Հակոբյան և ուրիշները:

Յերկյուղ էյին կրում Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվ. Կուսակցության հետ շփումից վո՛չ միայն «Ջանքի» այդ հայ ուսանողները, այլև «Դրոշակի» շուրջը խմբված ջո-ջերը, վորոնց յերբեք չեր կարելի տեսնել և վո՛չ մի սոց.-դեմոկրատական հավաքույթներին, հասարակական դիսպուտին:

Ռուսական ազդեցությունը, վոր ասել և թե եմիգրանտական — իր բոլոր կողմերով ու արտահայ-տություններով համարվում եր կործանարար: Ջանքիստների համար թույլատրելի յեր ամեն կապ մյուս բոլոր ոտար ազգությունների հետ, բացի ուսանելից, — վորովհետև այդ բառը հոմանիշ եր ժընեում սոցիալիզմի: Դաշնակցական շրջանները նույնիսկ «Թեո-րետիկական» վեճի առարկա էյին դարձրել (հատուկ իսկ դասախոսություն և կարդացվել հայ ուսանողու-թյան համար և դասախոսել և տաճկահայ-դաշնակ վոմն Մինասյան) այն հարցը, թե արդյոք կարո՞ղ և հայ մարդը ամուսնանալ ուսու կնոջ հետ և «բազդա-վոր լինել» անձնապես ու ազգայնապես...: Յեմ հան-գում էյին այն յեզրակացության, թե անպայման «վո՛չ», վորովհետև հայի և ուսու «խառնվածքները» տրամագծորեն տարբեր են, թե հարավի և հյուսիսի տիպերը «միակերպ» չեն սիրում, թե այդպիսի մի քայլ «վոճիր» կլինիր «ազգի ու մարդկության դեմ», և այլ նման ցնդարանություններ: Այսպիսի դատո-

դություններից հանվում եր մի այլ շատ հարկավոր յեզրակացություն ևս. —

— Հայ ուսանող-ուսանողուհի, ամուսնացիր ուժ հետ ուղում ես, բայց յերբեք ուսուի հետ...

Տրամաբանությունը միշտ նույն ուղղությամբ եր գործում «Դրոշակ»-Ջանքիստների շրջանում և սվե-լացնում եր. —

— Հայը ամուսնանալով պրավոսլավի հետ կորցնում եր իր հավատը-կրոնը, ուրեմն կորցնում նաև իր ազգությունը...

Ջանքիստ ուսանողներից թունդերը նույնիսկ պաֆոսով հայտարարում էյին. —

— Յեթե ինձ մոտենա մի ուսու որիորդ և ասի ուսուրեն, թե՛ «յես ձեզ սիրում եմ, պարոն», — յես տուանց տատանվելու կպատասխանեմ հայերեն — «դնա-կորիր, շուն-շանվորդի»...

Առասպելական ու ծիծաղելի են թվում այն կար-զի խնդիրները, բայց սա առասպել չե, այլ իրակա-նություն, և մենք այն ժամանակ ել ծիծաղում էյինք նրանց վրա: Փաստ և, վոր Դաշնակցությունը նաև այդպիսի «ազգային կարեոր» խնդիրներով եր զբաղեց-նում 900-ական թվականների սկզբներին իրեն ապա-վինած ժընեի հայ ուսանողությունը:

III.

Մեր կուսակցության Յերկրորդ Համագումարի նախորդակ՝ 1902/903 համալսարանական տարին ժը-նե թափվելին բավական թվով հայ յերիտասարդ ույ-նե, վորոնք վարակված չէյին Թիֆլիսի դաշնակցական «Ծիածան» և այլ աշակերտական խմբակների ծակ-ազ-գասիրական բթությամբ:

Շատ եր մանավանդ հայ գիմնադրամարտ ուսանողուհիները թիվը հարավային Ռուսաստանից:

Այդ շերտը վնչ միայն «որգանապես» կապված չէր հայ ազգային միջավայրի և սպեցիֆիկ իրականության հետ, վնչ միայն խորշում էր մտնել դաշնակցական «Ջանքի» խնամատարություն տակ, այլև սերտ կապված էր Ռուսաստանի ընդհանուր միջավայրի հետ: Նա շատ շուտով կտրուկ կերպով յերես դարձրեց «հարազատ» ջանքապատ շրջաններից ու ընկղմվեց ուսանական հեղափոխական ուսանողություն ընդհանուր կյանքի մեջ:

Դաշնակցության «Ջանքը», իր ամենահեղինակավոր ուսուցիչ-ղեկավարների՝ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Միքայել Վարանդյանի, Խաչատուր Մալումյանի և մյուսների ոգնությունը անդամ՝ անկարող յեղավ այդ նշմարվող նոր հոսանքի առաջն առնել:

Դաշնակցական «Ջանքը» շատ կարճ ժամանակում կորցրեց ժընեկի ուսանողության մեջ իր վաղեմի հեղեմոնիան:

1902/1903 թվականներին հայ ուսանողության ընդհանուր թիվը անցնում էր կես հարյուրից: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիային համակրող ուսանող-ուսանողուհիները՝ մոտ յերկու-յերեք տասնյակի: Նա պարբերաբար շտապում էր Պլենպալի հրապարակի մի ծայրին, Ավենյու դյու Մալի վրա գտնվող Հանդվիրգ հայտնի կաֆեյի դահլիճը իր քաղաքական դատարարակություն համար Պլենտնովին ու Լենինին ունկնդրերու փոխարեն Ռոզերե փողոցը դիմելու ծակազգասիրային փափսուկներ լսելու:

Դաշնակցությանը բաժին էլին մնացել հին ուսանող-ուսանողուհիները, վորոնց տիպիկ ներկայացուցիչներն էլին Խաչատուր Մալումյանի և զգալիցի ունեոր որիորդ Զուբաբյանի տիպի պատված «մըշտական ուսանողները»:

Սակայն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիային հարող ու համակրող հայ ուսանողությանը պետք էր ոգնություն գալ՝ ձեռներդրվելու և կազմակերպվելու:

Ահա այստեղ է, վոր վրա հասավ մեր Յերկրորդ Համագումարից ժընեկ յեկած մեր կրակոտ բալչեիկ Բողղան Կնունյանը, մեր կուսակցության այդ շրջանի անշուշտ յեղակի յերիտասարդներից մեկը: Ընկ. Բողղանը ապրում էր յերեք փողոցների խառնման անկյունում—Բուլվար-դե Ֆիլոզոֆի, Բուլվար Հեյվիտի և Շըմն դը Լ'Հոպիտալ—համալսարանից վնչ-հեռու կանաչավուն յեռհարկանի հին տան առաջին (բառ մեր՝ յերկրորդ) հարկում իր կնոջ հետ միասին, վորին Պապովնա էլինք կանչում՝ գյուղական քահանայի աղջիկ լինելու պատճառով:

Նա մնաց ժընեկում շատ կարճ, բայց յեռանդուն ու վճռական աշխատանք ունի կատարած ժընեկ հայ սոցիալիստ ուսանողության մեջ:

Բողղան Կնունյանը կարճ ժամանակում կազմակերպեց հայ առաջին մարքսիստական—սոցիալ-դեմոկրատական ուսանողական խմբակը ժընեկում: Վարձվեց (անդամավճարների գումարից) մի բավական մեծ սենյակ Կարուժ փողոցի վրա, Բոն-Պուան հրապարակին մոտ, ուր սկսեցինք ժողովել՝ Բողղանի ուրախ նախաձեռնությամբ:

Այդ խմբակի մեջ մտնում էլին մինչև տասնհինգ հոգի: Ինքը—Բողղանը դասախոսեց Ռուսաստանի սո-

ցիալ-դեմոկրատիայի հերթական խնդիրների մասին, զեկուցեց կուսակցության Յերկրորդ Համագումարի աշխատանքների առթիվ: Հիշում ենք, դատախոսեց նաև մեր ընկ. Արտյոմ Տեր-Յարությունյանը, զեկուցումը Անդրկովկասի բանվորական շարժման շուրջն էր:

Ժընևում մեր կուսակցական Յերկրորդ Համագումարի ցնցիչ տպավորության տակ ծայր տված սոցիալ-լիստ-ուսանողության շարժման հետ զուգընթացաբար՝ հայ ուսանողարնակ յեվրոպական մյուս համալսարանական քաղաքներում՝ զարգանում եր 1903—1904 թ.թ. նույնանման շարժում, վոր նախ և առաջ ուղղված էր Դաշնակցության դեմ: Զանազան քաղաքների սոցիալիստ ուսանողության հայ փոքրիկ խմբավորումները մեջ հաստատվել էյին կապեր, կատարվում էր մտքերի փոխանակություն: Փորձվում էր մի ընդհանուր գործեկակերպ մշակել, ուսանողական ընդհանուր ֆրոնտ հակադրել «Յեվրոպայի հայ ուսանողական միություն», վոր խաղալիք էր դարձրել Դաշնակցության ձեռքին:

Ստեփան Շահումյանը այդ համեմրոպական սոցիալ-դեմոկրատական շարժման կենդանի ողակն էր, նրա ղեկավարը, սիրված առաջնորդը:

Նա Ժընև—Մյունխեն—Բերլին գծի վրա շատ յեռանդ ունի թափած հակադաշնակցական ուսանողական սոցիալ-դեմոկրատական միասնական ֆրոնտ կազմակերպելու: Այդ համեմրոպական սոցիալիստական ընդհանուր ֆրոնտը հույս ուներ խորտակելու Դաշնակցության տիրապետությունը «Յեվրոպայի հայ ուսանողական միություն» մեջ: Մասնավորապես ծրագրվում էր տապալել ուսանողական այդ միության

նախագահ Սաչատուր Մալումյանին, վորի մոտ գրունվում էյին ուսանողական ընկերության խոշոր գումարներ: Բացի գաղափարական տարաձայնությունից, «կանոնադրական» պատրվակներից մեկը այն պիտի լիներ, վոր Ս. Մալումյանը ձայնագրուրկ է, քանի վոր նա վաղուց արդեն գաղաքել է «ուսանող» լինելուց, վոր նա կեղծ-ուսանող է և ուսանողության հետ գործ չունի: Դաշնակցությունից կորզած գումարներով ծրագրվում էր սկսել հայերեն սոցիալիստական հրատարակչություն՝ մեծ մասշտաբով, իհարկե այն ժամանակվա հատկացությունը միայն մեծ: Լավ յերազ էր:

Դաշնակցականները քնած չէին: Նրանք աշխատում էյին ուսանողական համագումարը ժողովել այնպիսի տեղ և այնպիսի կազմով, վոր իրենց ապահովված լինի մեծամասնությունը: Այդ «համեմրոպական» ժողովը գումարվեց ուսանողության համար շատ անհարմար, բայց Դաշնակցության համար շատ հարմար ժամանակ—1904 թվի ամառվան սկզբներին, կարծեմ Բերնում, յերբ ուսանողների մեծագույն մասը չէր կարող ընկնության կամ բացակայության (տուն վերադարձած լինելու) պատճառով մասնակցել ժողովին:

Ստեփանը այդ ժամանակ Թիֆլիսումն էր: Յերբ «Յեվրոպայի հայ ուսանողական միություն» համագումարի լուրը հասավ Թիֆլիս (կարծեմ «Մշակ»-ում հայտարարություն, այսինքն նամակ-խմբագրություն կոչ կար տպված), բոլորքի մի նամակ խմբագրվեց և միասին (յես ել յեկել էյի ամառը տուն) վորպես արտասահմանի հայ ուսանողության մի խմբի ներկայացուցիչներ, տեղ ենք «Մշակին» խմբագրատուն, վորտեղ մեր աչքը ծակեց Գարեգին Մաժակի ներկայու-

(20 705)

6002-2001

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԵՐ

թյունը խմբագրական աշխատակցի մի փոքրիկ սեղանի շուրջը նստած:

Քալանթարը և Հ. Առաքելյանը շատ սիրալիր խոստացան տեղ տալ մեր նամակին, բայց ուշացավ:

Մի քանի օրից հետո դարձյալ յեկանք: Այս անգամ միայն յես մտա խմբագրատուն: Ստեփանը սպասում էր Բազարնայա փողոցում յես ու առաջ քայլելով: Բայց դարձյալ տպագրության միայն խոստում ստացանք: Յեթե մնում է «Մշակի» արխիվը, յերևի այդ նամակը մնացած պիտի լինի:

Հատկացանք, վոր դաշնակ Գարեգին Խաժակի ներկայությունը իր ազդեցությունն էր ունեցել:

Շուտով տեղեկացանք, վոր «Յեւրոպայի հայ ուսանողության միության» մեջ ձևական հաղթանակը մնացել էր դաշնակներին: Խ. Մալումյանը վերընտրվել էր նախագահ. դումարները մնացել էյին նրանց ձեռքին: Բայց ուսանողության սոցիալ-դեմոկրատ հատվածը վերջնականապես խզեց միության հետ իր կապերը:

IV.

Մինչև 1905 թիվը ժընեը այն «գործարանն» էր, վորի բովից դուրս են յեկել Հոկտեմբերյան հեղափոխության այսորվան վորակված առաջնորդներից շատերը: Այդ քուերայի առաջին վարպետը յեղել է ընկ. Լենինը, վորի կյանքի և գործունեյության հետ սերտ կապված էր մեր կուսակցության քսանհինգ ու ավելի տարիներ:

Մենք հերոսների կուլտի կողմակիցներ չենք: Բայց գիտենք նույնպես, վոր անհատները տալիս են իրենց կոլորիտը անցքերին: Պրոլետարական հեղափո-

խության գլուխ կանգնած լինի մի վողորմելի Կերենսկի կամ իմպոտենտ Ծերեթելի, թե Լենինի մեծության մի կոյուս—տարբերությունը բավական տեսանելի յե, անգամ յեթե մի կողմը թողնենք ուղղությունները խնդիրը, անկախ մենշևիկ-բալչևիկյան հակադրությունից:

Հեղափոխական եմիգրացիայի և ուսանողության կյանքին անձանոթ ընկերներից շատերին կարող է թվալ, թե համաշխարհային մասշտաբով տեղի ունեցեղ դեպքերը միայն «ամբապնդեցին» ընկ. Լենինի մարքսիստական-հեղափոխական համբավը, հաստատեցին նրա մեծությունը:

Ընկ. Լենինի վերաբերմամբ այդ ճիշտ է միայն մասամբ:

Ի հարկե, Հոկտեմբերյան հեղափոխությունը այն «հրապարակն» էր, վոր աներեակայելի չափերով հայտնի դարձրեց նրա անունը, տարածեց այն մինչև աշխարհի ամենամոռացված ու խուլ խրճիթը, ստեղծեց պայմաններ մերկացնելու նրա հանճարեղությունը իր ամբողջ փայլով:

Բայց ճշմարտություն և նույնպես, վոր 900-ական թվականների առաջին տարիներից արդեն՝ ընկ. Լենինը հեղափոխական եմիգրացիայի, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի և ընդհանրապես Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի ամենափայլուն գեմքն էր, վոր նսեմացնում էր մյուս բոլոր գեմքերը, վորի առաջ արագորեն տեղի յեր տալիս անգամ Պլեխանովը:

Հեղափոխական մտքի տիրակալը՝ դեռ ուսական առաջին հեղափոխությունից առաջ՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան էր և վերջինիս կենտրոնական ուժը՝ արդեն ընկ. Լենինը:

Մեր կուսակցութեան Յերկրորդ Համագումարից հետո, յերբ Ռուսաստանի սոց.-դեմոկրատիան քաղաքական պայքարի լայն ճանապարհ ե դուրս գալիս ե նրա ղեկավարների առաջ դրվում են շատ ավելի բարդ ու խիստ պահանջներ՝ քան անցյալներում, պարզվում եր դեռ 1905 թ. առաջ, վոր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրը—բազմավաստակ Պլեխանովը յետ եր մնում հեղափոխական հորձանքից, թուլանում, հաճախ կորչում իսկ հակասութեաններին մեջ:

Մինչդեռ ընկ. Լենինը որ-որի վրա ամրանում եր ե իր ուժեղ բազուկների մեջ հավաքում Ռուսաստանի ամբողջ բանվորական շարժման առաջնորդութունը:

Զպետք ե զարմանալ, վոր հեղափոխական եմի-գրացիայի ե ուսանողական «կումիրն» եր ընկ. Լենինը: Նա մեծ եր արդեն իր այդ «անհայտութեան» որերին իսկ թե վորպես մարքսիստ ե թե վորպես հեղափոխական:

Յեթե Պլեխանովը իր առյուծի գեղեցիկ գեմքով ե լուրջ քայլվածքով հիշեցնում եր մեզ արտաքուստ յեվրոպական ամենամեծ պարլամենտի կուսակցական առաջնակարգ պարագլուխի կամ նույնիսկ նախագահի՝ իր հպարտ հայացքով, ինքնարավական քայլվածքով,—յեթե Լուենաչարսկու մեջ կային «թիֆլիսի լոթի»-ի շատ գծեր, վոր դարեջրի չորս-հինգ շուպ (բաժակ) դատարկելով՝ կարող եր առանց հոգնելու ե հոգնեցնելու ունկնդիրներին նույնպես չորս-հինգ ժամ խոսել Մաքսիմ Գորկու ստեղծագործութեան մասին (այդպիսի դասախոսութուն իսկպես կարգացել ե նա Ժրնեկ Պլենսպաե հրապարակի ժողովրդական Տան —«Մեզոն դյու-պյուպլ» սրահում),—յեթե Տրոցկուն՝ կա-

նաչավուն գլխարկին ցցված թռչունի փետուրով՝ դժվար եր տարբերել տիրույցի վորսորդից,—ապա՝ Լենինին իր անպաճուճ պրակտիկ սեպուն կոստյու-մով, գլխին հասարակ կեպին (վոր Հոկտեմբերից հետո ել նրա գերադասած գլխարկներից եր), հեծանիվը (բիսիկլետը) նստած կամ կողքից քաշելով, իր պարզ ու հասարակ վերաբերմունքով հիշեցնում եր ավելի շուտ յեվրոպական մի գիտակից բանվորի: Մատնում եր միայն նրա դեմքի շեշտված սլավ գծագրութունը:

Ժրնեկ հեղափոխական եմիգրացիայի ե ուսանողութեան կյանքին ծանոթ ընկերները գիտեն, թե ինչ ասել ե ընկ. Լենինը դեռ 1905 թվի հեղափոխութեանից առաջ: Հատորներ են պետք մեր կուսակցութեան Յերկրորդ Համագումարից առաջ ու հետո նրա մերկացրած հակայական գործունեութեան ուրվագծման համար: Յնորք կլինեք այստեղ մի այդպիսի փորձ անել: Նրա ամեն մի հոգվածը «Искра»-ում—յերբ ընկ. Լենինը դեռ չեր հեռացել նրա խմբագրական կազմից,—թե «Вперед»-ում, նրա ամեն մի նոր գրքույկ—«Ինչ անել», «Մի քայլ առաջ, յերկուսը յետ», «Յերկու տակտիկա» եայլն, նրա ամեն մի զեկուցում կամ ճառ միտինգում (մայիսի մեկի, Փարիզի Կոմունայի, Մարքսին կամ Լասալին հովիրված ե այլն)—մի-մի յերեվույթներ եյին սոցիալ-դեմոկրատիայի կյանքով ապրողների համար:

Յեով ո՞վ եր այն խիզախը, վոր կգներ իր գլուխը ընկ. Լենինի տրամաբանութեան բուռնցքի տակ, վոր կհանդգներ դուրս գալ նրա դեմ՝ հրապարակային «մենամարտութեան»: Լենինի յերկաթե լոգիկան ջախջախում եր այնպիսի անողորմութեամբ հակառակոր-

դին, վոր կարծես թե մի հսկա սարի ծանրության տակ ջարդվելիս լինե՞ր փայտե անդամացկուն տնակ և մարդ լսելիս լինե՞ր այդ փշրումի ճախրոցը:

Այսորվան շարժումը հասկանալու համար պետք է գնալ մինչև այդ որերի հեղափոխական պայքարը, վորտեղ թագնված են Հոկտեմբերի արմատների մազաթելերը:

Ահա ժընեի դարձյալ նույն պատմական Պլենպարի կոչված թագամասի նուշանուն դաշտ-հրատարակի ծայրին գտնվող իսկապես պատմական Հանդվերդ կաֆեյի մեծ դահլիճը, վորի մի անկյունում կանգնած է՝ կարծես թքով կպցրած մի փոքրիկ բեմ, իսկ պատերին կախված են դեմքը զանազան ձևով ծոմող քառանկյունի սև շրջանակներում հայելիներ:

Սրահը լի չէ եմիգրանտներով, վորոնց մեջ ցըրված է Ռուսաստանի բոլոր անկյուններից ժընե թափված բազմաբնույտ ուսանողությունը:

Դահլիճը այն աստիճան լցված է ծխով, վոր մարդկային գեմքերը կորցնում են ծխի մեջ իրենց գծապրությունը:

Բեմի վրա իրար կպած յերկու հասարակ սեղանի շուրջը նստած են կարմիր գաղութին հայտնի մի քանի ընկերներ:

Ամենից ծայրին սովորաբար նստում էր ընկ. Լենինը, վոր ձախ թևի արմունկով հենվելով սեղանին և ձեռքի վերջին յերկու մատները ծալելով, ֆուսյա՞ծ յերեք մատներով կարծես ծխից ծածկում էր իր աչքերը, բայց իսկապես մատների արանքներից գննում էր դահլիճը՝ իր փոքրիկ, շարժուն, խորթափանց ու «հեգնող» աչքերով:

Հանդվերդի տան ներքին—ըստ մեր առաջին—հարկում (դասախոսության դահլիճը յերկրորդ հարկումն էր) գտնվում էր եժանագին կաֆե-շանտանը, վորտեղից հաճախ հասնում էր դասախոսության դահլիճին նախարակ դաշնամուրի աղմուկը, յերեմն նույնիսկ մաշված կոկոտկաների ականջ ծակող արհեստական սուր ու անախորժ քրքիշը:

Միշտ ել ծայրից ծայր լցված սրահը անհամբեր սպասում էր, թե յերբ պետք է նախագահը խոսք տա ընկ. Լենինին:

Յեվ Լենինը խոսում էր ժամերով...

Առանց շունչ քաշելու է շունչ քաշել տալու տուգիտորիային...

Տարիներ շարունակ նա այդ պոպուլյեր Հանդվերդ կաֆեյի սրահում պատվաստել է հեղափոխական մարքսիզմը իր ունկնդիրներին և ուղարկել Ռուսաստան կացնելու այն արմատները, վորոնցով սնվում էյին ցարիզմը և բուրժուական-պամեշչիկական իրավակարգը:

Վերստի ծանր որեր է տեսել ընկ. Լենինը...

Արդյոք կա աշխարհիս յերեսին մի «մահացու մեղք», վորի մեջ մեղադրած չլինեյին այդ դժվարին որերին նրա թշնամիները, հաճախ նույնիսկ թուլացու գինակիցները: Մեր կուսակցության Յերկրորդ Համադամարից հետո, յերբ բալչեիկների և մենշեիկների մեջ ընդհարումները սկսեցին աստիճանաբար սրվել, մեր ամեն զոյնի ուղորդունիստները նրան մեղադրում էյին, թե նա «անբարիշտ» է, «կոպիտ», «անխնա», «կացնի պես տաշող», սիրում է «խճճմանքներ», ցուցադրում է «անարխիստական հակումներ»:

թե նույնիսկ «կազմալուծում ե կուսակցութիւնը»
և այլն, և այլն:

Բայց ընկ. Լենինը կատարում եր իր գործը և
անցնում, պատմութիւնը թողնելով լինել ամենի
անողորք դատաւորը:

Թույլատրելի ե ասել, — թեև պայքարը դեռևս չի
վերջացած, — վեր պատմութիւնը կարծես հենց եւս
գլխից ընկ. Լենինի կողմն և յեղել:



ԲԱԼՇԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Հեղափոխական կմիգրացիայի յեւլ ուսանողության անցյալից (մի ևջ Ստ. Շահումյանի յեւլ Բողղան Կնունյանի գործունէութիւնից) 25 կ.
2. Սուրեն Սպանդարյան 25 »
3. Յերկու տեսակետ զաղութահայ խնդիրներում 25 »
4. Արշակ Զուրաբյան 25 »

407. 80 807.